ճելի չրջան է եղել Մարաստանի (Ատրպատական), Ասորեստանի (Ատիաբէն) եւ Հայաստանի միջեւ:

Համաձայն արաբ Yakut-ի (13-րդ դար) բառարանի՝ «Անձեւացիքը գտնւում է Հայաստանի լեռների, Խլաթի, Ատրպատականի, Դիարբեքիրի եւ Մուսուլի միջեւ: Բնակիչները հայեր են, բայց այնտեղ կան քրդական ցեղեր եւս»:

Ըստ այդմ՝ Անձեւացիքը չէ սահմանափակուել սկզբնական, համանուն գաւառով, այլ պարփակել է աւելի ընդարձակ մի չրջան, աւելի շուտ՝ մի նահանգ: Ցամենայն դէպս պարզ է, որ Անձեւացիքը հնումը քրդերի բնավայր եղած է, թէեւ ցեղանունները ժամանակի ընթացքում փոփոխուել են, մանաւանդ 10-րդ դ. սկսած:

Հայ մատենագիրներին, մինչեւ Թոմա Մեծոփեցին (14-րդ դ.), առհասարակ ծանօթ չէ քրդերի գոյութիւնը Հայաստանում. մինչեւ իսկ դուր է քուրդ անունն անգամ որոնել հայոց մօտ՝ մինչեւ Մատթէոս Ուռհայեցի (12 դ.):

Մատթէոս, Սամուէլ Անեցի, Վարդան, Կիրակոս Գանձակեցի պատմագիրները մէկական անգամ յիշատակում են քրդերին, բայց այն էլ՝ որպէս այնպիսի ցեղերի կամ նրանց պատկանող անհատների անուններ, որոնք Հայաստանից դուրս են ապրել եւ կամ այդ ժամանակներից են ներս թափանցել Հայաստան:

Մինչեւ մահմեդական տիրապետութեան մուտքը Հայաստան՝ քրդական եւ առհասարակ իրանական հետքերը հազուադէպ են այդտեղ: Մահմեդականութեան հետ զուգընթաց միայն, որ այնչա՛փ նպաստաւոր կերպով խրախուսում է վաչկատունները եւ նրանց դաղանաբարոյ բնաղդները, դրութիւնը փոխուեց: Այդ ժամանակից էլ սկսում է քրդական պատուհասը:

Ցամենայն դէպս, հայ ցեղի տարածման հարաւային սահմանը հնումը, մեր ունեցած տեղեկութիւնների վրայ յենուելով, հնարաւոր է ճշդութեամբ որոշել: Այն է՝ երբ Քսենոփոնի առաջնորդութեամբ 10,000 յոյն վարձկան զինուորներ Կարդուխների (Karduchen) լեռնաշխարհի (Բոհտան) Mutyt գիւղից մօտ երկու քիլոմետր վեր, այսինքն՝ Բաղէշոյ ջրի եւ Բոհտան-սուի գետախառնուրդի ու Till գիւղի մէջ տեղում (որի մօտ վերջին գետը Տիգրիսի մէջ է թափւում) տեղացիներին ստիպեցին զիրենք անցկացնել Kentrites գետը, որ է՝ Բոհտան-սուն, ահա այդտեղ էլ նրանք Հայաստան մտան:

Այս նշանակում է, ուրեմն, որ Kentrites-ը հայ եւ Կարդուխ երկիրների սահմանը կազմող գետն էր:

Այդ գետանունը յետադային այլեւս երբեք չէ յիշատակւում:

Մարքվարտ համարում է այդ անունը տեղական-խօսակցական, որ ստուգաբանօրէն բացատրւում է հայերէն կտրել, կտրիչ բառով. այսինքն՝ այդ գետը կտրում-բաժանում է հարեւան երկու երկիրները:

Մարքվարտ եզրակացնում է, որ այդ անունը մեզ ծանօթ հայերէն հնագոյն բառն է: Գետը յետադային կոչուել է Զերմ (Բիւզանդ, Zirmas, արաբ. Zarma, Zarb):

Կարդուխները հաւանօրէն խալդերին ցեղակից ժողովուրդ էին — թէ՛ լեզուով եւ թէ՛ սովորոյթներով: Երբ Տիգրան Մեծը վերացրեց նրանց թագաւորութիւնը, այնուհետեւ էլ չարունակեցին պահել իրենց ինքնուրոյնութիւնը, թէեւ մերթ հայերի եւ մերթ պարթեւների, պարսիկների եւ կամ հռոմայեցիների գերիշխանութեան տակ ընկան: Ե. դարում նրանք հայերի, վրացիների, աղուանների, ղրկինների (Դաղստանում) եւ աղձնեաց հետ միասին յիշատակւում են որպէս մի առանձին քրիստոնեայ ժողովուրդ:

Կարդուխները հաւանօրէն Է. դարու կէսերին են քրդացել:

Այդ է ցոյց տալիս եւ Կորնէք նահանգանունը՝ Անանիա Շիրակացու մօտ:

Ցամենայն դէպս, 9-րդ դարու սկզբին նրանց աշխարհը քրդական կենտրոն էր:

* * *

Իր աշխատութեան մէջ Մարքվարտ չօշափում է նաեւ հայերի եւ ուտեաց ու աղուանից յարակցութեան խնդիրը:

Դեռ Ալեքսանդր Մեծից առաջ, ասում է Մարքվարտ, հայկական գաղութներ կային Ուտիքում, որ համապատասխանում է յետագայի Փայտակարան նահանգին՝ Երասխ գետի ստորին հովտում: Ուտիացիք պէտք է որ աղ-